ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 17 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 19Ա ԵՎ 19Բ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ («ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ) ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/9

ք. Սպիտակ « 24 » մայիսի 2018թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վլադիմիր Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան 17 բազմաբնակարան շենքի բակի ասֆալտապատման, ջրահեռացման և լուսավորության համակարգերի կառուցման, Ս. Ավետիսյան 19ա և 19բ բազմաբնակարան շենքերի բակի բարեկարգման, ասֆալտապատման և հենապատերի կառուցման, Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասի («Վարդանանց» հիմնական դպրոցի հարևանությամբ) փողոցի ասֆալտապատման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 90-րդ օրացույցային օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 28 861 200 (քսանութ միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 4 810 200 (չորս միլիոն ութ հարուր տասը հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝

1-ին չափաբաժին 9 560 400 (ինը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 1 593 400 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 9 800 400 (ինը միլիոն ութ հարյուր հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 1 633 400 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 9 500 400 (ինը միլիոն հինգ հարյուր հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 1 583 400 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները,

դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն
հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սպիտակ համայնք	«ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 43
ՀՎՀՀ՝ 06801433	ՀՎՀՀ՝ 06949569
Հ/Հ՝ 9002424303023	Հ/Հ՝ 2477104016930000
ֆին. նախ. գործառն. վարչություն	«Արդշինբանկ» Սպիտակի մ/ճ
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	Տնօրեն՝ Վ. Սահակյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 24 » մայիսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 17 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	քանակ	Միավորի արժեք	Ընդհանուր արժեք
1	2	3	4	5	6	7
1	27-32	Գոյություն ունեցող բերվածքային ծածկույթի քանդում	100մ^3	2,400	54.18	130.03
2	27-26	Ճանապարհային պրոֆիլի ուղղում առանց նյութերի ավելացման տոփանումով	100մ^2	10,50	15.14	158.96
3	1-962	Կողային հատվածի քանդում ձեռքով	մ^3	24,0	2.89	69.32
4	27-229-1	Կողնակների ամրացում ավազակոպիճով 10սմ ավազակոպիճով/	100 մ^2	1,200	32.05	38.46
3	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 մ^3	0,2640	506.81	133.8
4	Գ310-5	Տեղափոխում 5 կմ լցակույտ	տն	475,20	1.16	553.02
5	27-42	Խճային հիմքի կառուցում 10 սմ հաստութ. 100մԱ-40-:-70ֆրակ 12, 6մա 10-:-20 ֆրակ -1,5 մա/	100 մ^2	10,500	88.52	929.48
6	27-251	Բիտումի տարածում 4,12տն/1000մԱ	տն	4,285	179.02	767.09
7	27-164-2 27-165-2	Ծածկի վերին շերտի իրականացում Հ=5սմ «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից	100 մ^2	10,50	288.47	3028.89
8	22-446 K=0,5	Դիտահորի ծածկ. Հավաք. ե/բծածկի էլեմենտ. Ապամոնտաժում /4հատ/	մ^3	0,56	13.11	7.34
9	46-38	Բետոնե ավելցուկների քանդում	մ^3	0,2	13.59	2.72
10	23-227	Շին. Աղբի հավաքում, տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	0,36	0.38	0.14
13	Գ 310-5	Տեղափոխում 5 կմ	տն	0,36	1.16	0.42
14	22-446	Դիտահորի ծածկ. Հավաք ե/բծածկի էլեմենտ. առանց նյութի արժեքի / տեղադրում – 4 հատ	մ^3	0,56	26.23	14.69
		Անձրևաջրերի ջրահեռացման առվակ				
1	1-962	Բնահողի քանդում ձեռքով 4-րդ կարգի	մ^3	36,0	3.18	114.51
2	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	15,0	0.92	13.82
3	11-2.	Բնահողի տոփանում խճով 5-10մմ	100 մ^2	0,68	24.31	16.53
4	11-6.	Խճի նախաշերտի կառուցում 100մմ	մ^3	6,80	9.49	64.52
5	16-57	Ասֆալտ/բետ. Ծածկույթի քանդում	մ^3	0,50	3.18	1.59
6	1-1593	Շին աղբի բարձում մեքենային	1000 մ^3	0,0005	506.81	0.25
7	Գ310-5	Շին աղբի տեղափոխում 5 կմ	տն	1,00	1.16	1.16
8	6-90	Միաձույլ բիտոնե առվակների կառուցում B 15W 4 բետոնից	մ^3	15,2	63.44	964.28
9	Ինֆ տեղ	Ցանց 4մմ 100*100մմ Bp	մ^2	67,8	0.75	50.61
10	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 մ^3	0,0210	506.81	10.64
11	Գ310-5	Տեղափոխում 5կմ լցակույտ	տն	37,80	1.16	43.99

12	9-153	Մետաղական կոնստրուկցիաների պատրաստում և տեղադրում/ առվակի վրայի ցանց/ -2տեղ	տն	0,9141	42.78	39.11
13	Շուկա	Անկյունակ 50*50*5	մ	42,4	1.64	69.58
14	Շուկա	Անկյունակ 45*45*4	մ	65,8	1.17	77.04
15	Շուկա	Ուղղանկյուն խողովակ 40*40*2	մ	121,6	0.92	112.44
16	Շուկա	Անկյունակ 90*60*6	մ	12,0	3.7	44.38
17	Շուկա	Հեծան -8	մ	30,0	3.06	91.86
18	15-614	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում	100 մ^2	0,51	88.99	45.03
19	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում /Ա-500c/	տն	0,0220	346.07	7.61
		Արտաքին լուսավորություն				
1	8-403-1	Հաղորդալար ալյումինե ջիղերով մեկուսացումով կտրվ. 1*10մմԱ ԱՊՎ	100 մ	2,14	20.94	44.81
2	8-402-2	Հաղորդալարի անցկացում ԱՊՎ 1*10մմԱ	100 մ	0,20	23.74	4.75
3	8-370-3	Լուսատուի տեղադրում /LED լամպով/ 30ՎՏ	հատ	4,0	33.19	132.78
		Հենասյուն				
1	21-397	Մետաղական խողովակից հենասյան տեղադրում /1հատ -89*3մմ-7մետր	հատ	4,0	25.14	100.56
2	Շուկա	Պողպատե խողովակ d=40*3մմ	մ	8,0	1.15	9.2
3	8-305-6	Լայնակի տեղադրում	հատ	4,0	1.16	4.64
4	Ինֆ տեղ	Անկյունակ 40*40*4	մ	1,6	1.06	1.69
5	Շուկա	Ամրան Ա-3	տն	0,0021	331.73	0.7
6	8-52-1	Մեկուսիչ ՏՖ 20	հատ	8,0	0.69	5.54
7	Ինֆ տեղ	Ամրան Ա -1	տն	0,0009	341.2	0.31
8	15-614	Հենարանների խողովակների յուղաներկում /2 անգամ/	100 մ^2	0,088	88.99	7.83
9	1-966	Հենասյուների բների փորում՝ 4-րդ կարգի բնահողում	մ^3	1,00	6.03	6.03
10	1-969	Բնահողի փռում տեղում	մ^3	1,00	0.92	0.92
11	6-5	Մոնոլիտ բետոնե հիմքերի կառուցում Բ-15,0 բետոնից սյուների տակ	մ^3	1,00	43.93	43.93

Ընդամենը՝ 7967.00

20% ԱԱՀ՝ 1593.40

Ընդամենը՝ 9560.40

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 19Ա ԵՎ 19Բ ԲԱՋՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Հիմնա վորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	քանակ	Միավորի արժեք	Ընդհանուր արժեք
1	2	3	4	5	6	7
1	27-32	Գոյություն ունեցող բերվածքային ծածկույթի քանդում	100մ^3	1,820	54.19	98.63
2	27-26	Ճանապարհային պրոֆիլի ուղղում առանց նյութերի ավելացման տոփանումով	100մ^2	13,17	15.14	199.42
3	1-962	Կողային հատվածի քանդում ձեռքով	մ^3	18,0	2.89	52.00
4	27-229-1	Կողնակների ամրացում ավազակոպիճով 10սմ ավազակոպիճով/	100 մ^2	0,800	32.05	25.64

5	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 մ^3	0,2000	506.9	101.38
6	Գ310-5	Տեղափոխում 5 կմ լցակույտ	տն	360,0	1.16	419.03
7	27-42	Խճային հիմքի կառուցում 10 սմ հաստութ. 100մԱ-40-:-70ֆրակ 12, 6մա 10-:-20 ֆրակ -1,5 մա/ Բիտումի տարածում 4,12տն/1000մԱ	100 մ^2	13,170	88.54	1166.05
8	27-251		տն	5,426	179.05	971.53
9	27-164-2 27-165-2	Ծածկի վերին շերտի իրականացում Հ=5սմ «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից	100 մ^2	13,170	288.52	3799.8
10	22-446 K=0,5	Դիտահորի ծածկ. Հավաք. ե/բծածկի էլեմենտ. Ապամոնտաժում /2հատ/	մ^3	0,28	13.12	3.67
11	46-38	Բետոնե ավելցուկների քանդում	մ^3	0,1	13.6	1.36
12	23-227	Շին. Աղբի հավաքում, տեղափոխում և բարձում ինքնաթափին	տն	0,20	0.38	0.08
13	Գ 310-5	Տեղափոխում 5 կմ	տն	0,20	1.16	0.23
14	22-446	Դիտահորի ծածկ. Հավաք ե/բծածկի էլեմենտ. Առանց նյութի արժեքի / տեղադրում – 2 հատ	մ^3	0,28	26.23	7.34
		Հենապատ- 1				
1	1-961	Բնահողի քանդում ձեռքով 3-րդ կարգի	մ^3	9,6	1.8	17.32
2	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	3,60	0.92	3.32
3	11-2.	Բնահողի տոփանում խճով 5-10մմ	100 մ^2	0,078	24.31	1.9
4	6-21	Խամքարաբետոնե հիմքերի կառուցում Վ-7,5	մ^3	8,0	26.83	214.61
5	6-21	Խամքարաբետոնե հենապատի կառուցում Վ-7,5	մ^3	6,1	27.33	166.7
6	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 մ^3	0,0060	506.9	3.04
7	Գ310-5	Տեղափոխում 5կմ լցակույտ	տն	10,20	1.16	11.87
8	8-27	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,390	69.01	26.92
9	22-88	Ջրահեռացման խողովակի տեղադ. d=108*4մմ	մ	1,8	4.8	8.64
10	8-27	Ջրահեռացման խողովակի հիդրոմեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,0061	69.01	0.42
		Հենապատ- 2				
1	1-961	Բնահողի քանդում ձեռքով 3-րդ կարգի	մ^3	7,0	1.8	12.63
2	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	1,20	0.92	1.11
3	11-2.	Բնահողի տոփանում խճով 5-10մմ	100 մ^2	0,057	24.31	1.39
4	6-21	Խամքարաբետոնե հիմքերի կառուցում Վ-7,5	մ^2	5,8	26.83	155.59
5	6-21	Խամքարաբետոնե հենապատի կառուցում Վ-7,5	մ^2	3,7	27.33	101.12
6	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 մ^3	0,0058	506.9	2.94
7	Գ310-5	Տեղափոխում 5կմ լցակույտ	տն	9,90	1.16	11.52
8	8-27	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,267	69.01	18.43
9	22-88	Ջրահեռացման խողովակի տեղադ. d=108*4մմ	մ	1,6	4.8	7.68
10	8-27	Ջրահեռացման խողովակի հիդրոմեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,0040	69.01	0.28
		Հենապատ- 3				
1	23-47	Անցքերի գայլիկոնում հենապատերում մինչև 370մմ խորությամբ շախմատաձև 500մմ քայլով	100 անցք	0,42	32.5	13.65
2	46-71	Անցքերի ցեմենտացում	մ^3	0,02	91.66	1.83

3	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում /Ա-2/-18մմ	տն	0,0672	346.14	23.26
4	1-961	Բնահողի քանդում ձեռքով 3-րդ կարգի	$մ^3$	21,0	1.8	37.88
5	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	$մ^3$	21,0	0.92	19.35
6	6-91	Խամքարաբետոնե հենապատի կառուցում Վ-7,5	$մ^3$	12,0	27.33	327.94
7	8-27	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,280	69.01	19.32
8	22-88	Ջրահեռացման խողովակի տեղադ. d=108*4մմ	մ	3,0	4.8	14.40
9	8-27	Ջրահեռացման խողովակի հիդրոմեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,0100	69.01	0.69
10	1-249 1-254	Բուսական շերտի մշակում բուլդուզերով տեղափոխելով 50մ վրա կուտակումով	1000 $մ^3$	0,0240	281.37	6.75
11	1-1593	Բարձում իմքնաթափին էքսկավատորով	1000 $մ^3$	0,0240	502.78	12.07
12	Գ310-3	Բնահողի տեղափոխում 5կմ	տն	43,2	1.39	59.98
13	27-142 27-145	Գազոնների հողի նախապատրաստում Բուսական շերտի ներկրումով ձեռքով	100 $մ^2$	1,20	4.13	4.96
14	48-214	Գազոնի ցանում	100 $մ^2$	1,20	9.45	11.34

Ընդամենը՝ 8167.00

20% ԱԱՀ՝ 1633.40

Ընդամենը՝ 9800.40

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ («ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ) ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Հիմնա վորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	քանակ	Միավորի արժեք	Ընդհանուր արժեք
1	2	3	4	5	6	7
1	16-60	Եզրաքարերի քանդում	մ	127,0	0.73	92.27
2	27-33	Մայթերի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	6,8	3.20	21.77
3	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 $մ^3$	0,0068	510.39	3.47
4	Գ310-5	Տեղափոխում 5կմ լցակույտ	տն	13,6	1.17	15.94
5	1-960	Կողային հատվածների մշակում ձեռքով	$մ^3$	10,9	1.23	13.41
6	27-32	Մայթերի հիմնատակերի քանդում	$մ^3$	17,0	0.55	9.28
7	27-32	Գոյություն ունեցող բերվածքային ծածկույթի քանդում	100 $մ^3$	0,857	54.66	46.76
8	1-960	Գոյություն ունեցող ե/բետոնե առվակի մաքրում բնահողից	$մ^3$	4,2	1.23	5.17
9	1-1593	Բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 $մ^3$	0,1178	510.39	60.12
10	Գ310-5	Տեղափոխում 5 կմ լցակույտ	տն	200,30	1.17	234.75
11	27-26	Ճանապարհային պրոֆիլի ուղղում առանց նյութերի ավելացման տոփանումով	100 $մ^2$	8,5669	15.25	130.62
12	27-42	Խճային հիմքերի կառուցում 10սմ	100 $մ^2$	8,567	89.15	763.73

		հաստութ. /100մԱ-40-:-70ֆրակ 12,6մա 10-:-20ֆրակ 1,5մա/				
13	27-251	Բիտումի տարածում 4,12տն /100մԱ	տն	3,53	180.28	636.22
14	27-82-ա	Բազալտե հավաքովի եզրաքարերի տեղադրում 150*300 բետոնե B-15 180*300 հիմքի վրա	մ	127,0	8.22	1043.38
15	27-23	Մայթերի հիմքերի վար ավելացնելով խիճ /100մԱ-20-:40ֆրակ-5.5մա 10-:20ֆրակ-1.15մա/	100 $մ^2$	3,183	57.57	183.23
16	27-169	Ծածկի վերին շերտի իրականացում H=3սմ «Դ» տիպի ա/բետոնե խառնուրդից	100 $մ^2$	3,183	273.4	870.23
17	27-164-2 27-165-2	Ծածկի վերին շերտի իրականացում H=5սմ «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից	100 $մ^2$	8,567	290.51	2488.77
18	22-446 K=0,5	Դիտահորի ծածկ. հավաք. ե/բծածկի էլեմենտ. Ապամոնտաժում ապամոնտաժում /3 հատ/	$մ^3$	0,42	13.21	5.55
19	22-446	Դիտահորի ծածկ. հավաք. ե/բծածկի էլեմենտ. /առանց նյութի արժեքի/ տեղադրում -3հատ	$մ^3$	0,42	26.41	11.09
20	Շուկա	Թուջե մտոց 560 մմ	հատ	1,0	53.91	53.91
		Ջրահեռացման հանգույց-1				
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000 $մ^3$	0,0143	418.63	5.99
2	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	1,50	1.82	2.72
3	1-1593	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 $մ^3$	0,0054	510.39	2.76
4	Գ310-5	Տեղափոխում 5 կմ	տն	9,2	1.17	10.78
5	1-969	Բնահողի հետլիցք	$մ^3$	4,3	0.92	3.98
6	4-264	Պողպատե խողովակի տեղադրում d=325*6մմ	մ	26,8	2.2	58.84
7	1-969	Բնական հիմնատակի կառուցում	$մ^3$	6,1	0.93	5.66
8	22-75	Պողպատե կիսախողովակի տեղադրում d=325*6մմ	մ	53,6	15.58	834.98
9	15-614	Մետաղական խողովակների յուղաներկում	100 $մ^2$	0,547	89.62	49.02
10	8-27	Ջրահեռացման խողովակի հիդրոմեկուսացում բիտումի մաձիկով	100մԱ	0,536	69.49	37.25
11	6-90	Միաձույլ բետոնե ջրընդունիչի կառուցում F 150W 4B15 բետոնից	$մ^3$	0,44	63.89	28.11
12	27-16	ե/բետոնե կիսախողովակի տեղադրում /առանց նյութի արժեքի/	մ	6,0	5.35	32.11
		Ջրահեռացման հանգույց-2				
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000 $մ^3$	0,0058	418.63	2.43
2	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	0,80	1.82	1.45
3	22-75 k=0,5	Պողպատե խողովակի ապամոնտաժում	մ	5,0	0.63	3.17
4	22-75	Պողպատե խողովակի տեղադրում d=325*6մմ	մ	3,0	29.89	89.67
5	22-75	Պողպատե խողովակի տեղադրում d=325*6մմ /առանց խողովակի արժեքի/	մ	5,0	1.27	6.34
6	1-1593	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000 $մ^3$	0,0012	510.39	0.61
7	Գ310-5	Տեղափոխում 5կմ	տն	2,1	1.17	2.46
8	1-969	Բնահողի հետլիցք	$մ^3$	4,6	0.92	4.25

9	1-969	Բնական հիմնատակի կառուցում	$մ^3$	0,8	0.93	0.74
10	8-27	Ջրահեռացման խողովակի հիդրոմեկուսացում բիտումի մածիկով	100մԱ	0,082	69.49	5.70
11	6-90.	Միաձույլ բետոնե ջրընդունիչի կառուցում F 150W 4B 15 բետոնից	$մ^3$	0,60	63.89	38.33

Ընդամենը՝ 7917.00
20% ԱԱՀ՝ 1583.40
Ընդամենը 9500, 40

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 9002424303023
ֆին. նախ. գործառն. վարչություն
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 43
ՀՎՀՀ՝ 06949569
Հ/Հ՝ 2477104016930000
«Արդշինբանկ» Սպիտակի մ/ճ
Տնօրեն՝ Վ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2

« 24 » մայիսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 17 ԲԱՁՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Ճանապարհի ընթացիկ նորոգման անվանումը	Նախ. արժեք	Օրեր 2018թ.				
			10	10	10	10	10
1	Հողային աշխատանքներ		8 / 5				
2	Խճապատում բիտումի տարածումով		8 / 5				
3	Համատարած ասֆալտապատում			14 / 10			
4	Առուների կառուցում		6 / 10				
5	Արտաքին լուսավորություն				6 / 5		

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿ	14 / 5 ; 14 / 5	14 / 10	6 / 5	

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 19Ա ԵՎ 19Բ ԲԱՁՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Ճանապարհի ընթացիկ նորոգման անվանումը	Նախ. արժեք	Օրեր 2018թ.				
			10	10	10	10	10
1	Հողային աշխատանքներ		8 / 5				
2	Խճապատում բիտումի տարածումով		8 / 5				
3	Համատարած ասֆալտապատում			14 / 10			
4	Հենապատերի կառուցում		6 / 6				
5	Արտաքին լուսավորություն		6 / 3				

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿ	1 ; 8 / 4 ; 14 / 4 ; 14 / 4 ; 14	14 / 10			

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ («ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ) ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Ճանապարհի ընթացիկ	Նախ.	Օրեր 2018թ.

	Նորոգման անվանումը	արժեք	10	10	10	10	10
1	Հողային աշխատանքներ		8 5				
2	Խճապատում բիտումի տարածումով		8 10				
3	Համատարած ասֆալտապատում			8 10			
4	Ջրահեռացման համակարգ				8 10		

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿ	8 10 8		8 10 10		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 9002424303023
ֆին. նախ. գործառն. վարչություն
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 43
ՀՎՀՀ՝ 06949569
Հ/Հ՝ 2477104016930000
«Արդշինբանկ» Սպիտակի մ/ճ
Տնօրեն՝ Վ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 24 » մայիսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			հունիս	հուլիս	օգոստոս	Ընդամենը
1	45231187	սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան 17 բազմաբնակարան շենքի բակի ասֆալտապատման, ջրահեռացման եվ լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ	Վճարումներին իրականացվելու են փաստացի կատարված աշխատանքների դիմաց			9 560 400
2	45231183	Ս. Ավետիսյան 19ա եվ 19բ բազմաբնակարան շենքերի բակի բարեկարգման, ասֆալտապատման եվ հենապատերի կառուցման	Վճարումներին իրականացվելու են փաստացի կատարված աշխատանքների դիմաց			9 800 400
3	45451700	Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասի («Վարդանանց» հիմնական դպրոցի հարեվանությամբ) փողոցի ասֆալտապատման աշխատանքների	Վճարումներին իրականացվելու են փաստացի կատարված աշխատանքների դիմաց			9 500 400

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 9002424303023
ֆին. նախ. գործառն. վարչություն
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 43
ՀՎՀՀ՝ 06949569
Հ/Հ՝ 2477104016930000
«Արդշինբանկ» Սպիտակի մ/ճ
Տնօրեն՝ Վ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 24 » մայիսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 24 » մայիսի 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն